ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1102 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1676-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման N 2 հավելվածի 14-րդ և 15-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Ծառայությունը վարձու աշխատողին, անհատ ձեռնարկատիրոջը և նոտարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստ (այսուհետ՝ նպաստ) նշանակելուց (հաշվարկելուց, վերահաշվարկելուց) հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնին է տրամադրում՝

1) նպաստառուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում).

2) ժամանակավոր անաշխատունակության թերթիկի նույնականացման համարը.

3) ժամանակավոր անաշխատունակության օրացուցային ժամանակահատվածի սկիզբը և վերջը.

4) նպաստի տեսակը (ժամանակավոր անաշխատունակության նպաստի դեպքում՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակը).

5) նպաստի չափը, վարձու աշխատողի դեպքում՝ առանձնացված ըստ գործատուների, ինչպես նաև ըստ գործատուի միջոցներից վճարվող և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարվող նպաստի չափերի.

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարվող նպաստից հաշվարկված եկամտային հարկի չափը:

15. Ծառայության ներկայացրած տվյալները 5 աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրվում են վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի անհատական հաշիվ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

14.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ